ւաս։ Սակայն այս մրցմանէ առաջ դեռնոյ վրայ տակաւ մի փայտի թեփ տարածեց, և տղայոց քալելէն ետքը, անոնց 'ի ձախոյ դէպ յաջ և փոխադարձ քայլերն չափեց։ Կ'ըսէ՝ քար նետելու ատեն ամէնքը աջ ձեռք կը գործածէին, և երկուքը միայն ձախի նշան մի կու տային։ Վեց ուղղաձեռն տղաք երկայն քայլեր առին 'ի ձախոյ դէպ յաջ և ձախ ոտքով ցատքեցին։ Ապա զանոնք դաշտ մը տանելով հոն գաւազան մի տնկեց քառասուն քայլի չափ հեռու, և այլերին կապելով ինքը քանի մը քայլ առաջ տարաւ զիրենք, և յետոյ ձգեց որ ինքիրենցմէ երթան դէպ 'ի գաւազանն, տեսաւ որ ուղղաձեռն տղաք դէպ յաջ խոտորեցան, իսկ միւս երկու ձախաձեռինք դէպ 'ի ձախ։— Ցտրվին կը յաւելու՝ թէ իրեն և իւր բարեկամաց վրայ ալ նոյն բանը փորձեց, և ամէնքը դէպ յաջ խոտորեցան բաց 'ի միոյն՝ որ յայտնապէս ձախ էր։

Գալով երկու սրունից չափին, կարսոնի քննութեանց համեմատ՝ զորս ըրած է եօթանասուն կմախքի վրայ, ձախը երկայնագոյն է քան զաջն։ Ըստ Սիպլէյի ձախ ոտքը երկայնագոյն և լայնագոյն է քան զաջն։

Արդ աջ ձեռաց և ձախ ոտից յաճախագոյն գործածութեան երևութէն կը հետևի՝ թէ բնութիւնն ըստ կարելւոյն կը ջանայ երկակողմանի անհոտոտներ յառաջ բերել։ Եւ եթէ նա՝ միայն աջակողմեան գործածութեան դիմէր՝ շուտով ամէնքնիս ալ միակողմանի կ'ըլլայինք։ Այսու, թէպէտ բարձրագոյն կարգի կենդանեաց զարգացման մէջ բերում մի կայ դէպ յանչափակցութիւն, սակայն արտաքին չափակցութիւնը միշտ կը պահուի՝ ձախակողմեան և աջակողմեան գործարանաց ոմանց համեմատական աճմամբն։

ՆԻԳԱՐԱԿՈՒԱՑԻ ՋՐԱՆՑՔԸ

Ամէնուն ծանօթ է որ վերջերս ամերիկացի հարուստ դրամատեարց ընկերութիւն մը կազմուած է, իր հաշուոյն համար խաղաղական Ովկիանոսը՝ Ատլանտեանին հետ միացնելու նպատակաւ, ջրանցքի մը միջոցով որ պիտի անցնի Նիգարակուայի հասարակապետութենէն և համանուն ընէն։ Այս գործն արդէն շատ ատենէ 'ի վեր գիտնական և նշանաւոր բաղմաթիւ անձինքներէ առաջարկուած էր, և այնչափ օգուտ և առաւելութիւն ունի՝ որ դժուարաւ կ'ըմբռնենք թէ ինչու համար Լէսէբս այս ջրանցքէն նախագաս համարեցաւ նոյն նպատակին համար Բանամայի պարանոցը։ Այս վերջնոյս ձախորդ ելքն արդէն ամենուն ծանօթ է։ ընդհակառակն ամերիկացի դրամատեարց սկսած գործն յաջողութեամբ կը յառաջադիմէ և քիչ ատե-

digitised by A.R.A.R.@

նէն պիտի լինեայ։ Այս գործին վրայ ամերիկեան ուսումնասիրութիւնի մը մէջ մանրամասնութիւններ կը գտնենք՝ զորս գրած է Ցովհ. Շերման անդամ ծերակուտի Պ. Շերման Միացեալ Նահանգաց խորհրդարանին ամենէն նշանաւոր անդամներէն մին է և 1885 – 1887 ծերակուտի ժողովոյն ալ նախագահած է։

Դաշնագրով մը որ կնքուեցաւ ընդ մէջ Միացեալ Նահանգաց և Նիգարակուայի հասարակապետութեան 1884 դեկտ. 1ին, վճռուեցաւ որ Միացեալ Նահանգք ովկիանեան ջրանցք մը բանան որ անցնի հասարակապետութեան գաւառներէն։ Այս դաշնագիրը, 1884 դեկտ. 10ին ծերակուտի ժողովին ներկայացաւ, Արդուր նախագահին նամակով մը՝ որ անոր վաւերացումը կը թախանձէր. սակայն ամենեին որոշողութիւն մը չեղաւ մինչև յընտրութիւն Քլիվլէնտ նախագահին 1885 մարտ 4ին։ Պ. Քլիվլէնտ ընտրութենէն քանի մ՚օր վերջը պաշտօնապէս ետ առաւ դաշնագրութիւնը ծերակուտի ժողովոյն խորհրդակցութենէն, վասն զի ըստ իւր կարծեաց՝ դաշնագրութիւնը յատուկ և կարևոր առանձնաշնորհութիւններ կը պարգևէր ստացման կամ իրաւանց՝ Միացեալ Նախանգաց երկրէն դուրս, պայմանաւ պաշտպանելու 'ի պահանջել հարկին զամբողջութիւն հայրենեաց կամ շահուց ուր և գտնուին։

Քիչ վերջը, 1887 ապրիլ 25ին, Նիգարակուայի հասարակապետութիւնը որ այս գործոյն կատարման մէջ մեծամեծ շահեր ունի, Միացեալ Նահանգաց քաղաքացի առանձնական ընկերութեան մը ովկիանեան ջրանցք մը բանալու իրաւունք կուտար. Գոսգա Ռիգայի հասարակապետութիւնն ալ նոյն շնորհքն տրաւ։ Այս շնորհքները ստացող ընկերութիւնն ճանչցուեցաւ նաև 'ի խորհրդարանէն 1889 փետր. 29 վճռով։ Ընկերութիւնը կոչուեցաւ «The Maritime Canal Company of Nicaragua»։

Ընդհանուր ծախքը քննեալ 'ի սպայից Միացեալ Նախանգաց և ճարտարապետաց մասնաժողովէ մը վաւերացեալ՝ կ'ելլայ 73, 176, 808 տոլլար. որոյ վրայ պէտք է յաւելուլ 14, 633, 263 տոլլար դիպուածական և անհրաժեշտ ծախուց համար. և վերջապէս գործողութեան միջոց դրամագլխոյն տուած շահն ալ 'ի միասին առնելով 100,000,000 տոլլար ամբողջը։ Այս վերոյիշեալ ընկերութիւնը՝ աշխատութիւնը արդէն սկսած է և արդէն բաւական յաջող յառաջադիմութեան մէջ է, այնպէս որ թէ ծախքը, թէ գործոյն ուղղութիւնը և թէ գժուարութիւններն կատարելապէս ծանօթ են, բնական գժուարութիւնք ուրիշ մեծամեծ աշխատութեանց նման բազմաթիւ չեն, որովհետև ջրանցքին ամենէն բարձր մասը՝ միայն 110 ոտք բարձրութիւն պիտի ունենայ երկու ովկիանոսաց մակերևութէն։ Կատարուելիք աշխատութիւնը lockis գրութեամբ է նման 'ի Գանամա Նիկարագայի ջրվէժին մօտ շինուածին. միայն ծովախուռմ մը որ

digitised by A.R.A.R.@

կ'անցնի Սան Ժուան գետէն, որոյ երկայնութիւնն է 1250 ոտք իսկ բարձրութիւնն միջին հաշուով 61 ոտք՝ նաւարկելի ջրանցք մը կ'ապահովէ թէ 'ի խորութեան և թէ 'ի բարձրութեան, որ բաւական պիտի ըլլայ երկրին վաճառականութեան 120 մղոն երկայնութեամբ։ Մէկ ովկիանոսէն 'ի միւսն եղած հեռաւորութիւնն է 169 մղոն. յորոց 142 պիտի ձեանայ լճերով, գետերով և աւազաններով, ուստի պեղման և ջրանցքին չինութեան համար կը մնայ միայն 26 մղոն։ Թերևս ամենէն մեծ դժուարութիւնը Ատլանտեան ովկիանոսին և խաղաղականին ջրանցքին երկու ծայրերուն նաւահանգստաց չինութիւնն ըլլայ. սակայն կրիթընի նաւահանգիստը՝ Ատլանտեանին բերանը՝ որ ամենէն դժուարը կը կարծուէր՝ արդէն յաջողութեամբ չինուեր լմնցեր է։ Ցամենչորս ոտք խորութիւն պահանջող նաւերը՝ առանց դժուարութեան կը մտնեն այժմ այս նաւահանգստին մէջ և անդ կը թափեն իրենց վաճառքը։ Այս ջրանցքին պեղման ժամանակ հանդիպած դժուարութիւններն՝ չենք կրնար ամենեւին բանամային. ներուն նմանցուցնել, կամ Սուէզի ջրանցքին դժուարութեանց՝ որոնց յաղթեց քաջութեամբ Լէսսէբս. այս աշխատութիւնը՝ մէկ ովկիանոսին ծայրէն մինչև 'ի միւսն՝ ազատ է բոլորովին յաւազուտից և յաւերիչ ողողմանց։ Նոյն իսկ Նիգարակուայի լիճը՝ բնական խիստ նշանաւոր յատկութիւններ կը ներկայացնէ, ընդհատեալ լերանց շղթայի մը պարապը կը լեցուցնէ, որոյ բարձրութիւնը այս կէտիս մէջ գրեթէ ծովու մակերևութենէն հաւասար է, և լիճը ոչ միայն իւր ոչինչ բարձրութեամբ յարմար է նաւարկութեան, այլ ապահով նաւահանգստի մը ամէն առաւելութիւններն ևս ունի։

Թէպէտ ջրանցքին երկայնութիւնն մեծագոյն է քան զայլ յիշեալ ջրանցք՝ սակայն դժուարութիւնքն ոչինչ են՝ համեմատութեամբ Սուէզի ջրանցքին և Սէն կոթարի հատման. այս քիչ մը դժուարութիւնքն ալ՝ գործոյն յառաջ երթալովն 'ի սպառ կ'ահեռանան, մինչդեռ շահն, առաւելութիւնն և դիւրութիւնն՝ արդէն իսկ յայտնի կը տեսնուին գեռ գործը չլմնցած։ Ասոր կարևորութիւնն այնչափ մեծ է որ թէ քաղաքական և թէ վաճառականական աշխարհը՝ զբաղեր է այս խնդրով, և Յաջող եղբը տեսնելով շատ պիտի ուրախանայ։ Խաղաղական և Ատլանտեան ովկիանոսին մէջ ջրանցքի մը բացմամբ՝ պիտի կատարուի Գոլումպոսի երազն և յոյսն։ Ամերիկայի գիւտէն 'ի վեր չորս դար՝ միշտ այս փափագն և յոյսն ունեցեր են ճանապարհորդք և վաճառականք. այս յուսով է որ շատ անյաջող և ձախորդ ձեռնարկներ ալ եղան։ Վերջին տարիներս, մանաւանդ Գալիֆոռնիոյ բնակչաց աճումէն վերջը, Միացեալ Նահանգաց կառավարութիւնը իրեն ամենաշահաւոր և օգտակար կը համարէր այսպիսի ձեռնարկ մը, ուստի ամենայն ջանքով փութաց այն մասը թշնամեաց գրաւմանէ մը ազատ պահել, յետոյ այս պարանոցին վրայ կատարուելիք աշխատութեանց

digitised by A.R.A.R.@

այլևայլ ծրագրերու մասնակցեցաւ, զինուորական և քաղաքական ճարտարապետաց այլ և այլ ծրագիրներ, մասնրամասն և հմտալից ուսումնասիրութիւններ կատարել ոուաւ որպէս զի ամենէն աւելի յարմար և գիւրին ճամբան գտնան։ Ուրիշ բազմաթիւ աղգեր ալ այս պարանոցին բացումը մեծապէս շահաւոր նկատեցին, բայց տեղւոյն ընտրութեան և բռնելիք դծին վրայ այնչափ խնամք չբերին։ Սուէզի ջրանցքին յայող բացումը՝ յորդորեց զէնսէբ՝ աշխարհիս չորս կողմը նաւարկութիւնը դիւրացնելու համար, սկսիլ նաև բամայի պարանոցին հատումը. իւր ծրագիրն էր մէկ ծովէն ի միւսն ջրանցք մը բանալ մասամբ ծովու մակընթացութեան հաւասար մակերևութիւ, իսկ մասամբ ալ անկէ քիչ մը ցած։ Իւր գործը ցարդ անյայող գնաց։ և ծրագիրն իսկ բոլորովին անգործադրելի կը համարուի։ Նիգարակուայի ճանապարհը՝ աւելի ապահով և յայող կը համարուի, ծախքն աւելի քիչ է և օգտակարագոյն քան զԲանամա որ և նոյն նպատակին ալ կը ծառայէ։

Դեռ ուրիշ բազմաթիւ առաւելութիւններ ալ ունի՝ այս ջրանցքը՝ որք Միացեալ Նահանգաց և Ամերիկայի միւս պետութեանց մասնակցեն են, յորոց գլխաւորն այս է՝ որ շատ զգալի կերպով պիտի կարճեցնէ իրենց հեռաւորութիւնը և աւելի դիւրին և ուղղակի յարաբերութիւն մը պիտի հաստատէ իրենց մէջ։ Հարաւային Ամերիկայի և Մեքսիկոյի արևմտեան ափանց վաճառականութիւնը՝ ստիպեալ ըլլալով Հրուանդանին շրջանն ընելու, այն կէտէն աւելի դիւրութեամբ կրնայ մտնելալ Եւրոպական վաճառականութեան. այս գործով Ամերիկայի տերութեանց հասարակաց շահը՝ շատ զգալի կերպով պիտի ծի և զօրանայ։

«Այս ջրանցքին շինութիւնը, վիճակագրութենէ հաշուելով, ամերիկեան դրամագլխոյ համար շատ օգտակար գործածութիւն մը պիտի ըլլայ։ Հարստութեան և ճոխութեան արագ արագ մեծերումն 'ի Միացեալ Նահանգս, այլ ևս ընկեց զինքն այն ազգաց դասէն՝ որք միջոցաց պակասութեամբ չեն կրնար զբաղիլ արտաքին կամ միջազգային ձեռնարկներու և շահերու։

«Աւելի կարևոր խնդիրն է քննել և տեսնալ թէ ինչ եղանակաւ և ինչ միջոցներով այս գործը կը կատարուի։ Բայանի է թէ այս նը. պատակաւ Ամերիկա կազմեալ ընկերութիւնը՝ միւս վաճառականական ընկերութիւններէ տարբեր ոճով մը չի կրնար գործել. մինչև որ ամէն ծախուց կարևոր դրամն հայթայթէ՝ բաժիններ պիտի հանէ։ Բայց այս գործոյն մէջ երկու վտանգ կայ. նախ և առաջ, որովհետև գործը մինչև որ բոլորովին չի լմննայ և նաւերը չկարենան անցնիլ՝ ամենևին շահ մը չի կայ, մանաւանդ եթէ յանկարծ ընկերութիւնն կորանցնէ մեծ գումար մը ընդ մէջ շահուց և ինչմանց և այսպիսով գործը նախատեսուածէն աւելի արժէ՝ պիտի ստիպուին հարկաւ.

digitised by A.R.A.R.@

բապէ՝ շատ բարձր տուրք մը դնել անցող նաւերուն վրայ։ Բայց դեռ աւելի մեծ վտանգ մը կայ, մանաւանդ նկատմամբ Միացեալ Նահանգաց. ընկերութեան այս բաժնետոմսերը՝ յայտնի է թէ հրապարակի վրայ պիտի վաճառուին, և շատ հաւանականաբար կրնայ հանդիպիլ, որ մինչդեռ Միացեալ Նահանգք այսպէս ուղղակի կերպով շահ ունին, գործոյն առաջնորդութիւնը Եւրոպական տէրութեան մը ձեռքն անցնի։ Պ. Շերման այս խօսքերով Եգիպտոսի և Սուէզի ջրանցքին գործոց դիրքը կ'ուզէ նշանակել, գործ մը որոյ ուղղութիւնն դրամատանց մէջ ծախուեցաւ, և կ'ազդարարէ իր քաղաքակցաց որ արթուն կենան, չըլլայ թէ այս մեծ և դժբաղդ սխալմունքն իրենց ալ հանդիպի։

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

Լոյս տեսած է երրորդ Այբոմը որ պարունակում է իւր մէջ 20 մեծադիր լուսանկար պատկերներ Վայոց ձորում գտնուածներից, իւրեանց անցեալ և ներկայ համառօտ ծանօթութեամբ, աւելի հարուստ և ճոխ է քան առաջին և երկրորդ Այբոմը. գինը ճանապարհածախսով 10 բուբ. կազմածին. իսկ անկազմը 50 կոպ. պակաս. ստանալ ցանկացողները թէ առաջին թէ երկրորդ և թէ երրորդ Այբոմների համար դիմում են Administration de l'Imprimerie d'Etchmiadzine կամ ուղղակի կազմողին՝ Վաղարշապատ լուսանկար Մ. Փափազեանց։

Վաճառվում է

Նաև լուսանկար Մ. Փափազեանի կազմած հին և նոր Կտակարանի լուսանկար պատկերներ նուրբ և մաքուր, թուով 40 հատ — սոքա բաժանուած են երկու մասի, իւրաքանչիւր մաս 20 հատական, մէն մի մաս ձեռակազմ լինելով, գինը 6 բուբ. ճանապարհածախսով, ցանկացողները դիմում են Վաղարշապատ լուսանկար Մ. Փափազեանցին։



digitised by A.R.A.R.@